



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

20 օգոստոսի 2019 թվականի թիվ 293 - Ա
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՇԵՐՏԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգրքի 8-րդ և 11-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով, ՀՀ Տավուշի մարզում պաշտպանական անտառաշերտեր հիմնելու վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման և առաջարկությունների ներկայացման նպատակով

Կարգադրում եմ

- Ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.
 Աղաբեկ Գալստյան – Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏՍ ԳՀ բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար
 Համլետ Փիրումյան – Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ
 Վաղարշակ Սուքոյան- Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
 Սամվել Գևորգյան – Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
 Միքայել Ղալումյան – Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
 Սիրանուշ Զիբուխյան-Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
- Աշխատանքային խմբին՝ ՀՀ Տավուշի մարզում պաշտպանական անտառաշերտեր հիմնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմման նպատակով՝ 15-օրվա ընթացքում իրականացնել ուսումնասիրություններ ու ներկայացնել առաջարկություններ:

Հ. ԶՈՐԱՆՅԱՆ

20.08.2019

X